ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Գ.

Հայ ժողովուրդն իր բազմադարյան մշակույթը ստեղծել է Հայկական լեռնաշխարհում, որը տարածվում է Փոքր Ասիայի և Իրանական սարահարթերի միջև՝ հարավում սահման ունենալով Միջագետքը, հյուսիսում՝ ընդգրկելով Փոքր Կովկասի լեռնաշղթան:

Ազգային մշակույթի ակունքները գալիս են դեռևս տոհմացեղային և հայկական ցեղային միությունների ու կազմավորումների ժամանակաշրջանից:Դրանք մեզ հայտնի են ոչ միայն պահպանված առասպելներից, կրոնական հավատալիքներից, այլև պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերից: Պատմական Հայաստանի բազմաթիվ հնագույն բնակավայրերում, կիկլոպյան ամրոցներում, հարուստ դամբարաններում (Լճաշեն, Վանաձոր, Գեղամա, Սյունաց լեռներում և այլն) գտնված կենցաղային առարկաները, գործիքները, զենքերը, արձանիկները, զարդերը և այլն վկայում են հին հայկական մշակույթի բարձր զարգացման մասին: Այն, իր հերթին, ամուր հիմք դարձավ միջնադարի, նոր և նորագույն պատմական դարաշրջանների հայկական մշակութային արժեքների հետագա զարգացման համար:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանում եղել են ինչպես հոգևոր, նյութական ու մշակութային արժեքների վերելքներ, այնպես էլ կորուստներ: Մշակութային արժեքների կորուստների պատճառներ են դարձել, նախ, պարսկա-բյուզանդական պատերազմները, այնուհետև արաբների, սելջուկ թուրքերի, թաթար-մոնղոլների, Լանկ (կաղ)-Թեմուրի, կարա-կոյունլու, ակ-կոյունլու արշավանքները: Նրանք ավերում ու հրկիզում էին իրենց ասպատակած երկրները, թալանում բնակիչներին, ոչնչացնում նրանց ստեղծած հոգևոր և նյութական մշակութային արժեքները:

Արիստակես Լաստիվերտցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Միքայել Չամչյանը մեծ ցավով են խոսում հատկապես սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների, Լանկ-Թեմուրի արյունարբու արշավանքների մասին: Պատմագիրների աշխատություններում[1], ինչպես նաև օտար աղբյուրներում[2] մանրամասն նկարագրվում են, թե ինչպես սելջուկ-թուրքերը, թաթար մոնղոլները և Լանկ-Թեմուրի արյունարբու հրոսակախմբերը, հայտնվելով քաղաքակրթության

---

[1] **Ա. Լաստիվերտցի,** *Պատմություն, Ե., 1971,* **Կ. Գանձակեցի,** *Հայոց պատմություն, Ե., 1982:* **Ստ. Օրբելյան,** *Սյունիքի պատմություն, Ե., 1986,* **Չամչյան Մ.,** *Հայոց պատմություն, հ. Բ, Ե., 1984: Տե՛ս նաև* **Զուլալյան Մ.,** *Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Ե., 1990:*

[2] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Բյուզանդական աղբյուրներ,* **Հովհաննես Սկիլիցես,** *թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, հ. Գ, Ե., 1979:*

օրրաններից մեկում՝ Մեծ Հայքում և Փոքր Ասիայում, անխնա ոչնչացնում էին մշակութային արժեք ներկայացնող ամեն ինչ, նախ և առաջ ձեռագրերը, իսկ նյութական դրսեվորումներ ունեցող մշակութային արժեքները՝ գորգերը, ոսկյա և արծաթյա թանկարժեք զարդերը, կենցաղային իրերը հափշտակում: Նույն դաժանությամբ էին վարվում նաև կովկասյան թաթարները: Պետք է նշել, որ այդ վաչկատուն ցեղախմբերը, որոնք մինչև վերջերս ազգային ինքնության գիտակցություն չունեին և իրենց ուրիշներից՝ մասնավորապես քրիստոնյաներից, տարբերում էին «մուսուլման» ընդհանրական անվանումով, «ադրբեջանցի» տիտղոսը ամրագրեցին XX դ. սկզբին: Փաստորեն, Թուրքիայի քաղաքական նոր նկրտումների և ճնշումների տակ, ռուսական կառավարության օժանդակությամբ, 1918 թ. ստեղծվում է կովկասյան թաթարների, այսպես կոչված, ադրբեջանական պետությունը. նավթաշատ Բաքուն հռչակվում է պետության մայրաքաղաքը, որի կառուցմանը, արդյունաբերական և մշակութային զարգացմանը «ադրբեջանցիներն» ամենևին չեն մասնակցել:

«Ադրբեջանցիները» տասնամյակներ շարունակ Նախիջևանում, Արցախում (Լեռնային, Դաշտային) և Բաքվում մշակութասպան քաղաքականություն են իրականացրել: Նրանք նպատակասլաց հայաթափել էին Նախիջևանը և Դաշտային Արցախ-Գարդմանքը, աստիճանաբար ոչնչացացրել հայկական մշակութային արժեքները, բարբարոսաբար բնաջնջել Զուղայի խաչքարերը, իսկ թուրքերը դարերով մշակութային ցեղասպանություն են իրականացրել Արևմտյան Հայաստանում: Հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նկատմամբ երիտթուրքերի որդեգրած ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց նաև Հանրապետական Թուրքիայում, քանզի այն դիտվում էր որպես հայկական ներկայության անցանկալի վկայություն: Գիտակցելով եկեղեցու և հավատի դերը հայ ժողովրդի կյանքում՝ թուրքական կառավարությունը նպատակամղված սպանել է հայ հոգևորականներին, ոչնչացրել եկեղեցիներն ու վանքերը, հազարավոր միջնադարյան ձեռագիր մատյաններ, զավթել եկեղեցական գույքը[3]: Այդ մասին են խոսում բազմաթիվ փաստեր՝ փաստավավերագրական ժողովածուներ, հուշագրությունները, գիտական հետազոտություններ, պատմագրական և մատենագիտական աշխատություններ, Մեծ եղեռնի ճանաչման ու դատապարտման գործընթացը ներկայացնող ուսումնասիրություններ և այլն: Այդ հիմնախնդիրը արծարծել են հայ և օտարազգի գիտնականները՝ Մկրտիչ Ներսիսյանը, Ջոն Կիրակոսյանը, Ռուբեն Սահակյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Վարդգես Միքայելյանը, Յուրի Բարսեղովը, Ավետիս Փափազյանը, Արտեմ Օհանջանյանը, Ստեփան Ստեփանյանը, ինչպես նաև ֆրանսիացի Իվ Տերնոնը, գերմանացի Վոլֆգանգ Գուստը, Հիլմար Կայզերը, հրեա Յաիր Աարոնը և այլք: Հայտնի են թուրք հեղինակ Թաներ Աքչամի գործերը, որոնք փաստում են, որ օսմանյան կայսրությունում հայ բնակչության զանգվածային կո-

---

[3] *Մանրամասն տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2003),* **Դաղայան Խ.,** *Հայերը և Բաքուն (1850-ական թթ. – 1920 թ.), Ե., 2006:*

տորածներին ու տեղահանությանը համընթաց երիտթուրքական կառավարությունը կանխամտածված և ծրագրված ջանում էր ոչնչացնել նաև հայկական քաղաքակրթության նյութական վկայությունները:

Ընդգծենք, որ որևէ ժողովրդի կամ էթնիկ խմբի մշակույթը ոչընչացնելու նպատակով իրականացված գործողությունները ազգային-մշակութային ցեղասպանություն են կոչվում: Ինչպես իրավացիորեն նշել է հայտնի լեհ իրավապաշտպան Ռաֆայել Լեմկինը, ցեղասպանությունը (գենոցիդ) ոչ միայն ազգային կամ կրոնական խմբի ֆիզիկական բնաջնջմամբ վերացումը, այլև նրա ազգային-հոգևոր մշակույթի ոչնչացումն է[4]: Սակայն, ցավոք, «ազգային-մշակութային ցեղասպանություն» հասկացությունը չի մտել «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9 կոնվեցիայի մեջ:

Ազգային մշակույթի հետագա պահպանման գործում շատ կարևոր հանգամանք է, որ ԵԽ-ի Մշակույթի, գիտության և կրթության հանձնաժողովի նիստի ժամանակ մտահոգություն հայտնվեց ՀՀ սահմաններից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների վիճակի վերաբերյալ: Հատկապես նշվեց, որ 1912 թ. Արևմտյան Հայաստանում կար հայկական գործող 2260 եկեղեցի ու վանք, որոնցից 2150 ավերվել են 1915 թ. Մեծ եղեռնի ընթացքում: 1974 թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ի զեկույցի համաձայն, Մեծ եղեռնից հետո Թուրքիայում պահպանված 913 հայկական հուշարձաններից 464-ը ամբողջությամբ ավերված էին, 254-ը՝ հավասարեցված գետնին, իսկ 197-ը անհապաղ վերանորոգման կարիք ունեին[5]: Կարող ենք ասել, որ այս տվյալները մեկ անգամ ևս կարևորում են ՀՀ սահմաններից դուրս գտնվող մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ ԵԽ-ի շրջանակում անհապաղ միջոցառումներ ձեռնարկելու հարցը:

Հայ մշակույթի անխոնջ ներկայացուցիչները, ինչպես նաև պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, մշակութային ինքնության արժեքները համարելով ժողովրդի յուրօրինակության հաստատման ձև ու ազգի հոգևոր առողջության հիմքը, մի շարք քայլեր են ձեռնարկել դրանց իրավական պաշտպանությունը ապահովելու և մշակութային ժառանգությունը հաջորդ սերունդներին փոխանցելու համար:

Ազգային մշակութային ժառանգությունը վանդալիզմից և ոչընչացումից պաշտպանելու գործում առանձնապես կարևորվում են մի շարք իրավական նորմատիվ ակտերի դերն ու նշանակությունը. 1) ՀՀ Ազգային ժողովի որոշումները. Ա) *Միանալ մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցման արգելմանն ու կանխմանն ուղղված միջոցառումների մասին կոնվենցիային (22 հունիսի 1993 թ., արձ. հ. 317, կետ 6 հ. ն-0869 -1. կոնվենցիան Հայաստանի*

---

[4] *Ազգ, 26.IV.2008:*

[5] **Սամուէլյան Թ.,** *Հայաստանի մշակութային ժառանգություն (Իրավական դաշտի ուսումնասիրություն), Ե., 2001, էջ 19 -20:*

համար ուժի մեջ է մտել 1993 թ. դեկտեմբերի 5-ից): Այս իրավական ակտի հիմքը 1970 թ. նոյեմբերի 14-ին Փարիզում կայացած՝ Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի 16-րդ նստաշրջանում ընդունած միջազգային մշակութային համագործակցության սկզբունքների հռչակագրի դրույթներն են[6]:

Ուշագրավ է հռչակագրի հոդված 2-ը, որտեղ նշվում է. «Կոնվեցիայի մասնակից պետություններն ընդունում են, որ մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այդ արժեքների ծագման, պետությունների մշակութային ժառանգության աղքատացման գլխավոր պատճառներից են, և որ միջազգային համագործակցությունն առավել գործուն միջոցներից մեկն է՝ ապահովելու յուրաքանչյուր երկրի մշակութային արժեքների պաշտպանությունը նման վտանգներից: Այդ նպատակով մասնակից պետությունները պարտավորվում են իրենց տրամադրության տակ եղած միջոցներով հակազդել նման պրակտիկային, մասնավորապես, վերացնելով դրանց պատճառները և օգնելով կատարելու անհրաժեշտ փոխ-հատուցումներ»[7]:

Բ) *Միանալ 1954 թ. դեկտեմբերի 19-ին Փարիզում ստորագրված՝ «Եվրոպական մշակութային կոնվեցիային» (18 փետրվարի 1997 թ., Ն-159-1: Կոնվեցիան ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1997 թ. ապրիլի 25-ից): Կոնվեցիայից բխող դրույթների հիմնական նպատակն է բոլոր անդամների, ինչպես նաև այն եվրոպական պետությունների, որոնք կարող են Կոնվեցիային միանալ հետագայում, քաղաքացիների միջև խրախուսել միմյանց լեզուների, պատմության և քաղաքակրթությունների ուսումնասիրությունը: Պետք է ընդգծել, որ միջազգային պայմանագրերի և ծրագրերի միջոցով հայկական մշակութային ժառանգության պաշտպանությունը հատկապես կարևոր է Թուրքիայում, Ադրբեջանում և Վրաստանում, որտեղ հայկական մշակութային հուշարձանները քանդվում և ոչնչացվում են:*

2) ՀՀ Կառավարության որոշումները. *ա) «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակության սահմանման կարգը հաստատելու մասին (27 մարտի 2001 թ. N 239), բ) ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության՝ մշակութային արժեքների պահպանության գործակալու-*

---

[6] *Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին կոնվեցիա (14 նոյեմբերի 1970):*

[7] *Նույն տեղում, հոդվ. 2:*

թյան կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին (22 օգոստոսի 2002 թ. N 1356-Ն): Հարկ է նշել, որ գործակալության հիմնական նպատակն է ազգային մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային մշակութային համագործակցությանը և փոխանակությունների զարգացմանը նպաստելը, գ) Մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների արտահանումը կարգավորելու մասին (26 փետրվարի 2004 թ. N 245-Ն), դ) Մշակութային արժեքների պահպանական ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքները կամավոր սկզբունքով գրանցելու կարգը և չափորոշիչները հաստատելու մասին (19 մայիսի 2005 թ. N 631-Ն), ե) Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու կարգը և ձևը հաստատելու մասին (23 հունիսի 2005 թ. N 981-Ն), զ) Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման կարգը սահմանելու մասին (1 հունիսի 2006 թ. N 827-Ն), է) Բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքներն օգտագործելու և դրանք հանձնելու, հաշվառելու և ոչնչացնելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1999 օգոստոսի 4-ի N 494 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (18 փետրվարի 2010 թ. N 146-Ն):

3) ՀՀ մշակույթի նախարարի հրամանները. ա) Ժամանակավոր ներմուծված մշակութային արժեքի լուսանկարին ներկայացվող պահանջները սահմանելու մասին (31 մայիսի 2005 թ. N 287-Ն), բ) Ժամանակավոր արտահանումից վերադարձված մշակութային արժեքների նույնականացման կարգը սահմանելու մասին(25 հուլիսի 2005 թ. N 348-Ն), գ) ՀՀ մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների ցանկը կազմելու սկզբունքները հաստատելու մասին (30 օգոստոսի 2005 թ. 428-Ա), դ) ՀՀ մշակույթի նախարարին կից մշակութային ժառանգության պահպանության խորհուրդ ստեղծելու և խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին (09 նոյեմբերի 2007 թ. N 666 -Ա):

4) ՀՀ սահմանադրությունը *(1995 թ. 27-ի նոյեմբերի հանրաքվեով), որի համապատասխան հոդվածում նշված է. «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո: Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»[8]:*

5) Հայաստանի Հանրապետության օրենքը՝ *պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (ընդունվել է 11.11.1998 թ., լրացումներ և փոփոխություններ կատարվել են 2011 թ. Հուլիսի 6-ին): Ուշագրավ են*

[8] *ՀՀ Սահմանադրություն, Ե., 2008, հոդվ. 11:*

հատկապես I, IV, VI, X գլուխները: Առաջին գլխի 3-րդ հոդվածում ընդգծված են ՀՀ օրենքի նպատակի և խնդիրների մասին.

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքի նպատակն է՝ ա) հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի իրավական հիմքերի սահմանումը, բ) այդ գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների կարգավորումը: Սույն օրենքի խնդիրներն են՝ ա) հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության հիմնադրույթների սահմանումը, բ) հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման հարցերի կանոնակարգման սկզբունքների սահմանումը, գ) հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավասությունների սահմանումը. դ) հուշարձանների՝ որպես անշարժ գույքի հատուկ տեսակի նկատմամբ սեփականատիրության, տնօրինման և օգտագործման առանձնահատկությունների սահմանումը»[9]:

IV, VI, X գլուխները նվիրված են հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության ապահովմանը, հուշարձանների ամրակայմանը, նորոգմանն ու վերականգնմանը:

6) ՀՀ օրենքը՝ *մշակութային օրենսդրության հիմունքների մասին (ընդունվել է 2002 թ. նոյեմբերի 20-ին): Օրենսգրքի հոդված 1-ում նշված են ՀՀ մշակութային օրենսդրության խնդիրները: Դրանք են՝ ա) ապահովել և պաշտպանել ՀՀ քաղաքացիների՝ խոսքի, ստեղծագործության ազատության, հասարակության մշակութային կյանքին մասնակցելու սահմանադրական իրավունքը, բ) կարգավորել մշակութային գործունեության սուբյեկտների միջև առաջացող հարաբերությունները, գ) սահմանել պետական մշակութային քաղաքականության սկզբունքներ, մշակույթին պետական աջակցություն ցուցաբերելու իրավական հիմքեր և ստեղծագործական գործընթացին պետության կողմից չմիջամտելու երաշխիքներ, դ) ստեղծել ՀՀ մշակութային հարստության պահպանման, տարածման և զարգացման համար իրավական երաշխիքներ:*

Արժեքավոր են նաև սույն օրենսգրքի 8, 9 գլուխները, որոնցում ամրագրված են ՀՀ միջազգային մշակութային համագործակցությունը և փոխանակությունները օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, մշակութային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությանն առնչվող հոդվածները[10]:

---

[9] *ՀՀ օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին, Ե., 1998, հոդվ. 3:*

[10] *ՀՀ օրենքը մշակութային օրենսդրության հիմունքների մասին, Ե.,2002, հոդվ. 27, 29, 30:*

7) ՀՀ Քրեական օրենսգիրքը, *որի առանձին հոդվածում ամրագրված են պատմության և մշակույթի հուշարձանները ոչնչացնելուն կամ վնասելուն ուղղված հանցագործությունների համար սահմանված համապատասխան պատժամիջոցներ*[11]*:*

8) ՀՀ Օրենքը ոչ նյութական մշակութային ժառանգության մասին: *Հոդված 1-ում նշված է օրենքի կարգավորման ոլորտը, ըստ որի, սույն օրենքը կարգավորում է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության և զարգացման գործընթացների ընթացքում ծագող իրավահարաբերությունները, ներառյալ՝ ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, հետազոտման, կիրառման, վերականգնման, ուսուցման, տարածման, այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը, ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման, միջազգային մշակութային համագործակցության, ՀՀ և օտարերկրյա պետությունների ժողովուրդների մշակութային հաղորդակցության խնդիրները, սահմանում են այդ ոլորտում ֆիզիկական ու իրավաբանական անձանց մասնակցության ընթացակարգերը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները*[12]*:*

Բացի վերոհիշյալ իրավական ակտերից, ազգային մշակութային արժեքների պահպանման կարևոր գործոն են ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, Քաղաքաշինության մասին օրենքը, Հողային օրենսգիրքը, Հուշարձանների մասին օրենքը, Արխիվային ֆոնդի օրենքը, Հեղինակային իրավունքի օրենքը, Հարկային օրենսդրությունը և այլ օրենքներ:

Այսպիսով, ՀՀ օրենսդրական համակարգում մշակվել են մի շարք իրավական նորմատիվ ակտեր, որոնք կարևոր պաշտպանական օղակ են ազգային մշակույթի պահպանման գործընթացում:

НОРМАТИВНЫЕ ПРАВОВЫЕ АКТЫ КАК ВАЖНЫЙ ФАКТОР СОХРАНЕНИЯ НАЦИОНАЛЬНЫХ КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ

АРУТЮНЯН М. Г.

Резюме

На протяжении своей тысячелетней истории армянский народ, независимо от социальных и политических условий, активно участвовал в мировом культурном процессе. Пройдя большой исторический путь, армянская культура внесла свою весомую лепту в сокровищницу мировой культуры.

В течение веков на Армянском нагорье формировались различные – большие и малые – политические образования, ставшие ареной

[11] *ՀՀ Քրեական օրենսգիրք, Ե., 2009, գլուխ 25, հոդվ. 264:*

[12] *ՀՀ օրենքը ոչ նյութական մշակութային արժեքների մասին, Ե., 2008, գլուխ I, հոդվ. 1:*

столкновений интересов могущественных государств. Эти политические образования подвергались влиянию тех или иных цивилизационных процессов. Границы Армении неоднократно перекраивались, то расширяясь, то сужаясь. Однако как на пике политической мощи, так и в тяжелый для армянской государственности период армянский народ сумел сохранить свою культурную и национальную идентичность, и свидетельством тому является принятие ряда законов, подзаконных актов и иных правовых документов, связанных с сохранением культурного наследия и созвучных международным нормам.

THE LEGAL NORMATIVE ACTS AS IMPORTANT FACTOR FOR THE PRESERVATION OF NATIONAL CULTURAL VALUES

M. HARUTYUNYAN

Abstract

Throughout all its thousand-year history Armenian people always created regardless of social and political conditions doing its best to meet the world cultural processes. Armenian culture having a long historical path, left its legacy in the world culture.

Over a long historical process the political structures as well as small and big states have been forming at Armenian Highlands which have repeatedly been a scene of clashes for powerful states interests being a subject of various civilizations, influence. The borders of Armenia have been changed for many times, sometimes being increased or decreased on Armenian Highlands. Despite the tops of political power as well as within hard periods of our state, we could preserve our cultural and national identity. The merit of our State is adoption of a range of laws and other legal documents related to the cultural heritage preservation which by its specifics meet the international standards.